

ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ»Ը¹

Էսսեան սանուց միութեան երրորդ Գրական ասուլիսը՝ Դանիէլ Վարուժանի *Հեթանոս երգեր*ուն վերլուծութեան նուիրումը՝ տեղի ունեցավ 16 ապրիլ 1913, երեքշաբթի, Բերայի Էսսեան վարժարանի սրահին մէջ:

Նախագահ Պ. Գրիգոր Զօհրապ ստիպուած ըլլալով բացակայիլ՝ հաւաքոյթին նախագահեց Պ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ:

Կարդացուեցաւ Պ. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ կողմէ ղրկուած բացման խօսքը, յետոյ հաջորդաբար խօսք առին Պ. Պ. Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ՝ որ Գրական ասուլիսներու մասին տեղեկութիւններ հաղորդելէ ետք ներկայացուց Վարուժանի գրական կեանքը, ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻԻՐԵԱՆ՝ որ վերլուծեց Դանիէլ Վարուժանը իբր բանաստեղծ՝ իր կրած ազդեցութիւններով միասին, ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ՝ որ ծանրացաւ առաւելապէս *Հեթանոս երգեր*ուն վրայ, ՏՕՔԹ. ԱՐՄԵՆԱԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ՝ որ *Հեթանոս երգեր*ու թերի նկատած կողմերուն վրայ միայն ծանրացաւ, ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ՝ որ խօսեցաւ Վարուժանի լեզուին եւ իրապաշտութեան վրայ, եւ Գ. ԽԱԺԱԿ՝ որ Վարուժանի վերջին գործին մէջ նկատի առաւ մասնաւորապէս հայրենիքի եւ աշխատանքի երգիչը: